

ՏԱՃԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՍՐԱՍԴԻՐ

ՋԱՐՄԱՅԻ ՔԱՀԱՆԱՅ ԿԵՂԵՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 2 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1910

ԹԻԻ 27

“ՏԱՃԱՐ”, Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դրուշ
Գաւառաց համար տարեկան	40 »
Արտասահմանի համար տարեկան	10 ֆրանկ
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

Բաժանորդագիրները կանխիկ են

«ՏԱՃԱՐ»-ի թէ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Ջարմայր Քահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեփքաւ, Հայոց եկեղեցի

درسمادته بشکطاشده ارمنى کلیساستده (داجار) غزتهسى مدیرى پاپاس زارما

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache Eglise Arménienne

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՋՈՒՄԱՆ

Ջարմաքճըլար, Յակոբեան խան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Ծ. Վրդ. Գալէմբարեան
2. Տ. Տիրայր Ծ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
4. Տ. Սուրէն Վրդ. Գալէմբարեան
5. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
6. Տ. Արիստակէս Բնյ. Հիսարլեան
7. Տ. Զարմայր Բնյ. Կէզիւրեան

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուրբիս Բնյ. Պալլաճեան
5. Տ. Պողոս Բնյ. Պէյալճեան
6. Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բնյ. Անանեան
8. Տ. Գրիգոր Բնյ. Ճէպէճեան

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԲ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱՂԻՐԱՆՈՒՊՈԼԻՍ.—Առաջն. Փոխանորդ Տ. Արսէն Բնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒՍ.—Տ. Ռուբէն Բնյ. Գալէմբարեան
ԱՄԵՐԻԿԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Պողոս Վրդ. Գալէմբարեան
ԱՅԵԹԱՊ.—Տ. Գարեգին Բնյ. Պողարեան
ԱՅԻՕՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ.—Տ. Խաչատուր Ա. Բնյ. Տօնէլեան
ԲԱՅԵՐԴ.—Մ. Սանոսեան էֆ.
ԳԱՂԱՏԻԱ.—Առաջնորդ Տ. Բաբգէն Ծ. Վրդ. Կիւլէսէրեան
ԳԱՀԻՐԷ.—Առաջնորդ Տ. Մկրտիչ Ծ. Վրդ. Աղաւնուհի
ԵՂԵՍԻԱ.—Բ. Թիւրաքեան էֆ.
ԵՍՁՂԱՏ.—Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ. Դիմաքսեան
ԵՐԶՆԿԱ.—Առաջնորդ Տ. Երուանդ Վրդ. Փէրտահճեան
ԶՄԻԻՆԻԱ.—Տ. Յարութիւն Բնյ. Տ. Մարգարեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ.—Տ. Գալուստ Բնյ. Տ. Գալուստեան
ԽԱՐԲԵՐԻ.—Առաջն. Տեղապահ Տ. Գէորգ Ծ. Վրդ. Ասլանեան
ԿԱՐԻՆ.—Առաջնորդ Տ. Սմբատ Ծ. Վրդ. Սաւտէթեան
ԿԻՐԱՍՈՆ.—Մաթոս էֆ. Թոքատլեան
ԿԻՒՄԻԻԼՃԻՆԷ.—Տ. Ներսէս Բնյ. Նշանեան
ՀԱԼԷՊ.—Առաջն. Տեղապահ Տ. Շահէ Վրդ. Գասպարեան
ՄԱՆԶԷՍԹԸՐ.—Առաջնորդ Տ. Գէորգ Ս. Եպիսկ. Իւթիւճեան
ՄԱՐԱՇ.—Տ. Հմայեակ Բնյ. Վարժապետեան
ՄԱՐԶՈՒԱՆ.—Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ.—Տ. Ոսկի Բնյ. Պրպիեան

ՆՈՐ ԶՈՒՂԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բազարատ Վրդ. Վարդապարեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ.—Տ. Նաթան Բնյ. Տատեան
ՈՒՇԱՔ.—Կարապետ էֆ. Քէնեան
ՊԱՆՏՐՄԱ.—ՊԱԼԵՔԻՍԻՐ.—Առաջնորդ Տ. Կարապետ Ծ. Վրդ. Մազլումեան
ՊԱՂՏԱՏ.—Առաջնորդ Տ. Մովսէս Ս. Եպիսկ. Կէօմբիւճեան
ՊԱՅՐԱ.—Կարապետ էֆ. Քէրթմէնեան
ՊԱՐՏԻԶԱԿ.—Յովհաննէս էֆ. Տ. Կարապետեան
ՊԷՅՐՈՒԹ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Եզեկ Վրդ.
ՊՐՈՒՍԱ.—Առաջնորդ Տ. Յովհաննէս Ս. Եպիսկ. Արշարունի
ՌՈՒՍՃՈՒԹ.—Տ. Մկրտիչ Բնյ. Մըրջնիկեան
ՌՈՏՈՍԹ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բարթող Ա. Բնյ. Թագմճեան
ՍԱՄՍՈՆ.—Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ. Օտապաշեան
ՍԵՐԱՍՏԻԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Թէփիլէ Բնյ. Օտապաշեան
ՍԵԼԱՆԻԿ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Կարապետ Բնյ. Թուխմանեան
ՍՕՅԻԱ.—Տ. Մեսրոպ Բնյ. Տ. Մեսրոպեան
ՏԱՐՏԱՆԷԼ.—Տ. Դիոնիսիոս Բնյ. Տրէդեան
ՏԷՏԷ-ԱՂԱՃ.—Տ. Գարեգին Բնյ. Տէօվլէթեան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ.—Դաւիթ էֆ. Մովսէսեան
ՏԻՄԷԹՕԳԱ.—Տ. Գէորգ Բնյ. Թէրգեան
ՏՓՂԻՍ.—Հ. Առաքելեան
ՓԱՐԻԶ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Վառնապուհ Բնյ. Քիպարեան
ՔԷՍՍԹԷՆՃԷ.—Տ. Մատթէոս Բնյ. Մանիկեան
ՔՂԻ.—Առաջն. Տեղապահ Տ. Պսակ Վրդ.
ՖԻԼԻՊԷ.—Տ. Տաճատ Բնյ. Դերձակեան
ՖԻԷՉՆՕ.—Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 2 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1910

ԹԻԻ 27

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. — ԽՄԲԱԳՐԱԿԱՆ, Բարեկարգութիւնը, ԶԱՐՄԱՅՐ ՔԱՇԱՆԱՅ. — Յիսուս Նային քաղաքին մէջ, (Շաբ. եւ վերջ) ՂԵՒՈՆԴ Մ. Վ. ԴՈՒՐԵԱՆ. — ԿՐՕՆԱ. ՊԱՏՄԱԿԱՆ, Ստեփանոս Սիւնեցի, (Շաբ.) ԵՂԻՇԷ Վ. ԽԱՅԵՐԵԱՆ. — ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ, Պուէտ Խ. Միսարեան, (Ա.), ԱՏՐՈՒՇԱՆ. — Աշունը, (քերթուած), Թարգմ. ՍՈՒՐԷՆ Վ. ԳԱԼԵՄԵԱՆ. — Նորապսակ Սրբազաննէրը, ԽՄԲ. — ԱԶԳԱՅԻՆ ԿՆԱՆԻՔԸ, Շաբթուան լուրերը եւ ժողովոց որոշումները:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

Հայ Եկեղեցին ծանր տագնապ մը անցընելու վրայ է սա միջոցին, յորմէ հեռէ խօսելու ազատութիւնը բացաւ բերաններու կապանքները, և կաշկանդուած՝ չըզթայուած բազումները սկսան շարժիլ համարձակօրէն: Ինչպէս խաւարին մէջ երկար տտեն մնալու հարկադրուած աչքեր կը շլանան յանկարծ՝ երբ արեւուն պայծառ լոյսին մէջ կը տեսնեն ինքզինքնին: Ինչպէս տարիներու երկար օղակաւորումի մը մէջ ակամայ համրութեան դատապարտուած մէկը՝ լեզուին կապանքները քակուած միջոցին առաջին անգամ՝ անկապակից աղաղակներ, անիմաստ խօսքեր պիտի հանէր բերնէն. և՛ մանաւանդ՝ ինչպէս զէնքի գործածութեան բոլորովին անվարժ

մէկուն ձեռքն հրազէն մը կամ պարզ սուր մը յանձնուած ատեն աջ ու ձախ պիտի պարպէր զայն, կամ պիտի շարժէր ու շողացնէր սուրը՝ իր սիրելիները կամ գոցէ ինքզինքը վիրաւորելով, այսպէ՛ս եղաւ աղատութենէն ետքը մեզի համար ալ: Եւ աւա՛ղ, որքան երկարատեւ եղաւ մեր շլացումը:

Մէկդի թողլով այն խոշոր սխալները՝ քաղաքական և ազգային տեսակէտով՝ որ գործուեցան ազգին ընդհանրութեան կողմէ — ժողովուրդ, կուսակցութիւններ, պաշտօնական և անպաշտօն մարմիններ — և որոնց հետեւանքը այնքան բուռն ու ցաւազին կերպով կրեց ու կը կրէ տակաւին այս տառապեալ աղգը, մենք պիտի յիշեցնենք այն ուժգին հարուածը զոր անխորհուրդ, անչղահայեաց յանդգնութեամբ մը տուին ու կուտան շատեր՝ ազգային դարաւոր Եկեղեցիին, անո՛ր որու հովանին տակ միայն կրցեր է Հայ ազգը քաշքշկէ կեանք մը, թէ և արիւնազանդ, բայց

միշտ կարենալով պահել ինքնուրոյն գոյութիւն մը, այնքան այլադան տարրերու խուժանին բուռն հակակրօթեան մէջ տեղ :

Եկեղեցւոյ ամէնէն նուիրական սրբութիւնները արհամարհուեցան, անոր հիմնական սկզբունքներն ուրացուեցան, և անտեսել ուղուեցաւ Եկեղեցիին փրկարար դերը Հայ Ազգին գոյութեանը համար : Յետոյ, ջերմօրէն իր «լոյս հաւատքին» փարած ժողովրդեան արդար ընդվզումին տուելու, քննադատութիւններն իրենց ուղղութիւնը փոխեցին քիչ մը, և հակակրօնականէն դարձան եղան հակակղերական :

Այդ քննադատութիւնք ևս բացարձակապէս իրաւացի չէին, քանի որ մասնաւորներու թերութիւններ և զեղծումներն ընդհանրացնել կ'ուզուէր, արդիւնք կը նկատուէր կղերական կազմակերպական դրութեան մը, կղերք կը հռչակուէր մասնաւոր դասակարգ մը, իշխման մը, որ ժողովուրդը կեղեքող բռնակալներուն ընկերը կամ գոնէ օժանդակն է. ինչ կ'ըսեմ, ինք ալ բռնակալ կ'անուանուէր :

Եւ սակայն կղերին հասցէին ուղղուած քննադատութիւններն անհիմն, անիրաւ չէին բոլորովին, քանի որ հայ կղերին մէջ ստուար թիւ մը կը կազմեն անոնք որ իրենց անհատական բարոյական կեանքով, իրենց հանրային պաշտօնավարութեան եղանակով, իրենց զարգացումի պակասութեամբ և ժողովրդային հոգեբանութեան բացարձակ անգիտութեամբ, և ժողովուրդին՝ ու նոյնիսկ իրենց՝ շահերու պաշտպանութեան համար ցուցուցած դատապարտելի, թոյլ անտարբերութեամբ արդարացի դիտողութիւններու, դժգոհութիւններու գայթակղութիւններու շարժառիթ հանդիսացած են :

* *

Կրօնքին ու կղերականութեան դէմ ուղղուած այս բուռն յարձակումներուն անուղղակի մէկ հետեւանքը կրնանք նկատել Եկեղեցւոյ Բարեկարգութեան հարցը, որ լրագրութեան մէջ սկսաւ ծեծուիլ, և Կրօն. ժողովոյ անդամ Գեր. Տ. Գինէլ Ծ. Վ. Գալէմքեարեանի մատուցած առաջար-

կագրով վարչական սեղանի վրայ ելաւ, ու որոշուեցաւ Համագումարի մը նկատառութեան յանձնել :

Անշուշտ գոհացուցիչ է այս շարժումը : Եկեղեցական Ընդհանուր ժողովներ, երկար դարերէ ի վեր դադրած էին գոյութիւն ունենալէ մեզի համար. և Հայ Ս. Եկեղեցիին վարչական կազմակերպութիւնը, նաեւ իր ծիսակատարութիւնը, ենթարկուած զանազան օտար աղքեցութիւններու, շատ բան կորսնցուցեր է նախնի դարերու իր պարզութիւնէն : Միւս կողմէ Եկեղեցւոյ մէջ հեղինակաւոր վարիչ ձեռքերու, հօգոր, աննկուն նկարագիրներու պակասութեան հետեւանօք, շատ բան պակսեր է միօրինակ կանոնաւորութենէն որ յատկանշէր պէտք է ըլլար եկեղեցական արարողութեանց. նուիրապետական կարգին պատկառանքը, կարգապահութիւնը յաճախ կը փայլի իր բացակայութիւնով, և ատկէ առաջ կուգան աններդաշնակութիւններ, խառնակութիւններ, դանդաղութիւններ ժամասացութեան մէջ. ծեծեքուն գեղգեղանքներ իրենց ձայնին հաւնող դպիրներու կողմէ՝ առաւելակշիռ դեր ունին արարողութեանց երկարաձգման մէջ, որմէ այնքան կը զրգոհուին դուռն ուրեք — հանդիսաւոր օրերու մէջ — եկեղեցի եկող ժողովուրդը :

Այս և նմանօրինակ թերութիւններ են առաւելապէս, որ ժողովրդային դժգոհութեան առիթ կուտան : Իսկ ժողովուրդին եկեղեցիէն ուժացման հիմնական պատճառները պէտք է փնտել ուրիշ տեղ : Այդ զանազան պատճառներուն մէջ հարկ կ'ըլլայ շեշտել ա՛յն պարագան որ իրեն հոգեւոր շինութիւնը չի գտներ հաւատացեալը եկեղեցիին մէջ, ուր, աւա՛ղ, կը պակսի ամենազօրաւոր, բարոյացուցիչ ազդակը, Բեմը, ուր Աւետարանի վսեմ բարոյական ուսուցութիւն ժողովուրդին հեղինակօրէն, հմուտ, հիւթեղ ոճով մը, սրով ունկնդիրը կարողանար նորութիւն մը գտնել յաւիտենական, բայց միշտ նոր ճշմարտութիւններու կրօնքին այդ լուսարանութեանց մէջ :

Մեր խոնարհ կարծիքով ասո՛ր պէտք է դարձան խորհէր հոգեւոր իշխանութիւնը :

Եւ սակայն էականն անտեսուած ըլլալ կը թուի ներկայացուած բազմաթիւ բարեկարգական առաջարկներուն մէջ: Կրօն. Ժողովի դիւանին յանձնուած աւելի քան 50—60 բարեկարգական ծրագիրներուն, նաեւ Տաճարի խմբագրութեան ուղղուած մէկ երկու տասնեակ գրութիւններուն մէջ հազուադէպ կերպով կը հանդիպինք այդ կարգի էական խնդրոց հիմնական լուծման առաջարկներու, լաւ եւ այդ լուծումն յառաջ բերող միջոցներու:

Ընդհակառակն եկեղեցական բարեկարգութեան հարցին առթիւ մէջտեղ կը նետուին այնպիսի պարագաներ, որ շատ հեռու են ստիպողական հանգամանք ունենալէ: Կը շօշափուին վարդապետական-դաւանաբանական կէտեր, որոնց կարելի չէ թեթեւօրէն մօտենալ՝ առանց Եկեղեցւոյ ամրապինդ չէնքին վնասելու:

Եկեղեցւոյ պաշտօնեայի մը կողմէ խնդիր յարուցուեցաւ ամուսնութիւնը Եկեղեցւոյ Խորհրդներէն մէկը չնկատուելու, նաեւ սուրբերու բարեխօսութեան վրայ հրապարակաւ գրուեցաւ շատ համարձակ ոճով մը: Ասոնք լոկ ծիսական-ձեւական խնդիրներ չեն, ասոնք կը մտնեն վարդապետական-դաւանաբանական սահմանին մէջ, եւ եղած դիտողութիւնները, որքան ալ բարի նպատակով մը մէջտեղ նետուած ըլլան, իր Հայերու արիւնով նուիրագործուած սուրբ հաւաքին պինդ փարոզ բարեպաշտ ժողովրդեան հոգեւոր չինութիւնը յառաջ բերելու բնոյթը չունին: Ընդհակառակն կը յիշենք Հայ Եպիսկոպոսի մը ուրացումը առաքեալներու լեզուախօսութեանը, Ս. Հոգիին էջքին առթիւ Սիօնի վերնատան մէջ

Ո՛ւր կ'երթանք այս ուղղութեամբ:

Ամէն պարագայի մէջ դէպ ի նոր ու զօրաւոր կազմակերպութիւն մը չէ որ կը դիմենք, այլ լաւ եւս դէպի կազմալուծութիւն, դէպի քայքայում՝ Սահակներու, Մեսրոպներու, Բարդուղիմէոսի, Օճնեցիներու, Ենոքայիւնիւրու այնքան զօրաւոր հաւատքով մը պաշտպանած ու պահպանած սուրբ, նուիրական վարդապետութիւններուն:

Իրրեւ յետին մշակը Հայաստանեայց Ս. Եկեղեցիին, եւ համեստ ուսումնասիրող մը Հայ կեանքին ու Հայ ժողովրդեան հոգեբանական սրամադրութեանց, կրնանք՝ առանց հերքուելու երկիւղի՝ յայտարարել համարձակօրէն թէ այդ կարգի փոփոխութիւններու չէ որ կը սպասէ հայ ժողովուրդը ամէն բանէ առաջ իր Եկեղեցիին մէջ: Անիկա նախ կը փնտռէ Եկեղեցականութիւն մը, որ հաւատքը ունենայ այն կրօնքին որուն պաշտօնեան է, գիտութիւնը, հմտութիւնը ունենայ անոր հիմնական սկզբունքներուն եւ վարդապետութիւններուն, որ ճշմարիտ հաւատացեալի մը սուրբ, մաքուր, անքննադատելի կեանքը ապրի, եւ որ՝ վերջապէս՝ իր ընդհանուր զարգացումով բարձր ըլլայ այն ժողովուրդէն զոր ճշմարտութեան ու բարոյականի ուղիղ ճամբուն մէջ առաջնորդելու նուիրական կոչումն ունի:

Ժողովուրդը ա՛յս կը պահանջէ ամէնէն առաջ: «Բարեկարգեալ Եկեղեցւոյ համար բարեկարգ, զարգացեալ եկեղեցականութիւն պէտք է, կը գրէ լրջախոհ նամակագիր մը: Ի՞նչ օգուտ միայն շարականները, ծէսերը կարճելէ, նոր օրէնքներ դնելէ, երբ պաշտօնեան հին է, կամ տգէտ, կամ անտարբեր: Ի՞նչ օգուտ, մարդը, քարոզող ու ապրող օրինակի պաշտօնեան եթէ չունենանք»: Ու ես պիտի աւելցնէի թէ այդ պարագային եկեղեցական բարեկարգութեան ամէնէն փայլուն ծրագիրները նշանակութեանէ զուրկ մեռեալ տառ մնալու պիտի դատապարտուէին, ճիշտ Ուսումնական Խորհրդոյ քանի՜ տասնեակ տարիներէ ի վեր կազմած, սրբազրած, բարեփոխած եւ Ազգ. Վարչութեան կողմէ վաւերացուած կրթական ծրագիրներուն նման, որ թուղթի վրայ կը մնան ապարդիւն, այդ ծրագիրներէն օգտուելու կարող ձեռնհաս ուսուցչին չգոյութեան պատճառով:

Հետեւապէս, մենք իսպառ անհամամիտ կը գտնուինք այն ամէնուն, որ ստիպողականը թողած, իբրեւ բարեկարգական էական պահանջ կը կառչին այնպիսի կէտերու որոնց բարեփոխման համար ոչ միայն Եկեղեցական Համալսարանի Ժողովոյ,

այլ նոյն իսկ Համագումարի պէտք չկար :

Մենք երբեք չպիտի կրնանք համամիտ գտնուիլ ամէն անոնց որ իբր թէ ժողովուրդին հասկնալի ըլլալու դիտումով, Եկեղեցւոյ լեզուն աշխարհաբարի վերածել կ'ուզեն վերեւ վար: Համամիտ չենք անո՛ր համար որ լրագրական լեզուն հասկնալու չափ ուսում առած մէկը շատ դիւրաւ պիտի հասկնայ Աւետարանի պարզ, սահուն և այնքան գեղեցիկ գրաբարը: Իսկ զայդ չհասկցող ուսմիկը չպիտի հասկնայ նաեւ այն աշխարհաբարը որուն պիտի վերածուէին եկեղեցական արարողութիւնները: Համամիտ չենք անո՛ր համար նաեւ որ Արեւելեան և Արեւմտեան Հայերու Եկեղեցիներուն մէջ գոյանալիք լեզուական անջատում մը գուցէ պիտի առաջնորդէր ապագային աւելի խորունկ անջատումներու: Համամիտ չենք վերջապէս անոր համար որ Կեսարացի, Այնթապցի, Ատանացի, Պրուսացի, Գաղատիացի, Եօզկատցի Հայերը, և ուրիշ բոլոր թուրքախօս գաւառներու և գիւղերու մեր Հայ եղբայրները, ոչինչ պիտի հասկնային աշխարհաբար արարողութիւններէն ալ, և թէ քանի որ ժողովրդեան հասկնալի ըլլալու տեսակէտն ունինք աչքի առջև, Զէյթունի, Հաճընի, Համիշէնի Հայերուն համար իրենց տղքատ գաւառաբարբառին պէտք պիտի ըլլար թարգմանել ժամասացութիւնները, և Սղերդի կամ Հալէպի Հայերուն համար ալ... Արաբերէնի: Եկեղեցւոյ լեզուի խնդրին մէջ բացարձակապէս համամիտ ենք Տ. Գրիգէ Ծ. Վ. ի, որ կ'առաջարկէր սօսական օրերու մէջ կարգացուած Բարսեղ Հայրապետի, Ոսկերանի ևն. երկար աղօթքները աշխարհաբարի վերածել:

Չենք կրնար — Եկեղեցի չյաճախելնին արդարացնելու ճիգով պատճառանքներ ստեղծող ծոյլերու կամ անտարբերներու դժնգում տալու համար միայն — կրճատել Հայ Եկեղեցւոյ հնադարեան արարողութիւնները: Կարելի է՝ ըստ միզ՝ յապաւել միայն կրկնութիւնները, և դպիրներէ ու մանց անհանդուրժելի երկարած գումները, և այդ շատ իսկ է բաղձացուած նպատակն յառաջ բերելու:

Հետեւապէս մեր խոնարհ համոզումն է թէ բարեկարգական նպատակով եկեղեցիէն ներս մտնելէ առաջ, ստիպողական է բարեկարգել եկեղեցական պաշտօնէութիւնը, դպիրէն սկսեալ մինչև ամէնէն վերին աստիճանները. որոշ սահման մը գծել անոնց պարտականութիւններուն և իրաւունքներուն. որոշել թէ ամուրի կղերականութիւնը ի՞նչ դեր պէտք է ունենայ մայրաքաղաքներու և մեծ քաղաքներու մէջ, կամ ո՛ր և է դեր պէտք է ունենայ. ճշտել, զօրացնել քահանայութեան դիրքը, յառաջդիմութեան, օգտակար ըլլալու և օգտուելու տւելի լայն ասպարէզ և միջոց տալ անոր, քահանայութեան — նաեւ ընդհ. եկեղեցականութեան — մտաւորաւ պէս զարգացման հոգ տանիլ, այնպէս որ անիկայ միշտ աւելի հմուտ ու զարգացեալ ըլլայ իր հովուած ժողովուրդէն. և որպէս զի այդպիսի հիմնաւոր զարգացումի տէր անձեր յօժարին սիրով կրել քահանայական սքեմը, նիւթական ապահով, հաստատուն դիրք մը տալ անոր, հոնեւ զինքը այն տեսակ մը մութացկանութիւնէն որ յատկանիշն եղած է դժբախտաբար հայ քահանայութեան, և անոր անկումը յառաջ բերած է:

Նոյնքան ստիպողական է ամուսնական օրինադրքի մը պատրաստութիւնը, որոշելու համար հասի չհասի խնդիրները, այն պարագաները որոնց միջոցին կարելի և ներելի է ամուսնալուծութիւնը, և այն պարագաները որոնց միջոցին բացարձակապէս աններելի է: Բայց այսպիսի օրէնքի մը պատրաստութիւնը շատ մեծ շրջահայեցութիւն, ու մեծ աշխատութիւն և խորունկ հմտութիւն կը հարկադրէ, ոչ միայն ժամանակակից կեանքի պահանջներուն և օրէնսդիտական ծանօթութեանց, այլ մասնաւոր Նախնեաց մատենագրութեան: Պէտք է ուսումնասիրած ըլլալ այն բոլոր գործերը, որոնց մէջ խօսուած, որոնց մէջ նոյն իսկ ակնարկութիւն մը եղած է այդ կարգի հարցերու, պէտք է սերտած ըլլալ բոլոր հին ժողովներու որոշումները, կանոնները ևն.:

Այս երկու էական պահանջներու, — եկեղեցականութեան զարգացման և ամուս-

նական օրէնքի պատրաստութիւն — լրացումէն ետքը, կարելի է մօտենալ եկեղեցւոյ բարեկարգութեան վերաբերեալ հարցերու, շատ զգոյշ քայլերով, ջանալով բարեփոխել ինչ որ ձեւական է, ինչ որ օտարաւոր է, ինչ որ չի չորստուր մեր դարձուած եկեղեցիին հիմնական վարդապետութիւններուն և դաւանութիւններուն:

Զգո՛յշ, պատուական Հայրեր և սիրելի եղբայրներ ի Քրիստոս, զգո՛յշ, չմոլորինք բարեկարգելու եռանդով մի՛ գուցէ շարափոխենք կամ հիմն խախտենք ինչ որ ունինք նուիրական, մեր սուրբ Նախնիքներու արիւնովը օծուած. ժողովուրդը եկեղեցիին մօտեցնելու մեր փափաքին մէջ մի գուցէ խոշոր գայթակղութիւն մը յառաջ բերենք, ու բոլորովին պաղեցնենք զայն իր Ս. եկեղեցիէն:

Զգո՛յշ:

ԶԱՐՄԱՅՐ ՔԱՆԱՆԱՅ

ՅԻՍՈՒՍ ՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԻՆ ՄԷՋ

(Շատ. նախորդ թիւէն եւ վերջ)

Ինքը, Յովհաննէս, որ միշտ բնութեան հետ հաղորդակցութիւն ունենալով ազատ ապրած էր, անապատի մաքուր օդը չրնչած և ջինջ ջուրն ըմպած, ինք որ բնութեան ազատ զաւակն էր, միթէ մահէն աւելի չէ՞ր իրեն համար բանտը. Երիքովի արմաւենիներուն և Յնգատափ զմուռներուն, շնորհալի այծեամներուն ու Մեռեալ ծովի խորհրդաւոր ջուրին մէջ լուսնի ցոլացումին տեղ, այժմ Յովհաննէս իր առջեւ կը տեսնէր միայն խոնաւ փլատակներ, մռայլ բանտի ժանգոտ վանդակներ և գաղանաբարոյ խոտտախտ բանտապահներ. այս պատճառու զարմանալի չէ եթէ այսպիսի բանտի խոնաւ չորս պատերու մէջ, ամենափոքր մարդոց հակողութեան տակ բանտարկուած արծուի աչքերն սկսած ըլլան այլեւս չափանիւ:

Սրբազան պատմութենէն կ'ուսանինք որ Աստուած իր ամենալաւ ու մեծ ծու-

ռաները շատ անգամ զգալի կերպով ձախորդութեան մատնած է. աննախընթաց կերպով մարտիրոսական հարուածներով անոնց վախճան տուած է, կամ երկարատե հիւանդութեամբ դեռ ևս իրենց գործերու հեռուոր նպատակը իրենց չապարգած, երեսէ ձգած է իրրեւ անպէտ զէնք. իբրեւ անյարմար անձինք նշանակուած նպատակի համար, ու անոնց կեանքն անմահ յաջողութեամբ և օրհնութեամբ չպսակուած, մեկնած են այս աշխարհէն: Այս բանը այն բարեդործ կրակի գործունէութենէն միայն մէկն է, որով Աստուած հոգւոյն մաքրուած ոսկին եօթն անգամ կը մաքրէ, յաւիտեանական երջանկութեան արժանի ընելու համար. բայց այս կրթիչ բարեբարութիւնը ոչ ոքի համար այնչափ սարսափելի ձեւով չեղեալ, որքան Յովհաննէսի համար:

Նա ըստ երեւութին ոչ միայն երկինքէն՝ Աստուծմէ մուցուած էր, այլ և իր բարեկամ Յիսուսէն ալ: Յովհաննէս Մաքեւրոսի բանտին մէջ կը հալէր, կը մաշէր, մինչ անդին Յիսուս Դաղիլիայի սքանչելի ծովեղերքը սարերու շուշաններուն մէջ կանգնած՝ հրճուող ժողովրդեան կը քարոզէր: Ինչո՞ւ երկնքի Հայրն ու բարեկամ Յիսուսը այսպիսի յուսահատ և վշտալի դրութեան մէջ թողած էին զինքը. միթէ իրեն կեանքը մաքուր չէ՞ր. միթէ իրեն ծառայութիւնը անձնուէր չէ՞ր, միթէ իրեն վկայութիւնը անձնուէր չէ՞ր. ինչո՞ւ Յիսուս խեղդող և կործանող ամբողջները երկնքի կայծակներով, շանթերով չխորտակեց, ազատելու համար զինքը՝ վկայող յաւաքընթաց մարգարէն Յովհաննէսը. այնքան հրաշքներէն մէկը չէ՞ր կարելի ի գործ դնել իր տանջուող ազգականին օգուտին համար. ինչո՞ւ Դաւթի երիտասարդ որդին — Յիսուս — Եղովմացուոց բանտերուն հիմերը երկրաշարժով չթփուցուց, ուրտեղ շատ բանտարկեալներ. առանց յանցանքի սպաննուած էին. կամ գոնէ իր տաններկու լեզէն հրեշտակաց մէկը ուղարկէր իր բարեկամն ազատելու, գէթ ուրախութեամբ վերջացնելու համար իր դառնագին կեանքը: Սրբեօք ասկէ յետոյ զարմանալի՞ կ'ըլլայ, երբ ըսենք թէ բանտարկեալ արծ-

ուին աչքերն սկսած էին այլեւս չտեսնել :
«Դուն ա՛ն ես որ պիտի գայիր, եթէ ոչ ուրիշի մը սպասենք» :

Յիսուս այս հարցման ուղղակի պատասխանը չտուաւ, այլ իր գործերուն, իր հրաշագործութեանց վկայութիւնը դրկեց : Յովհաննէս այդ գործերուն վկաները լսելէ յետոյ կրնար համոզուիլ թէ Մարգարէներէն կանխասացեալ Փրկչին գործերն էին : Յովհաննու աշակերտներն ականատես եղան նոյն օր Յիսուսի գործած կարգ մը ուրիշ հրաշքներուն, և երբ իրենց հարցման պատասխանին կը սպասէին, Յիսուս ըսաւ անոնց. — Գացէ՛ք, պատմեցէ՛ք Յովհաննէսին, ինչ որ տեսաք այսօր ձեր աչքերովն իսկ : Կոյրերուն աչքերը կը բացուին, խուլերուն ականջները կը լսեն, կաղերը եղջերուի պէս կը ցատկրտեն, անդամալոյժները ոտքի կ'ելլեն, կը քալին, բորոտները կը սրբուին, հոմերը լեցունին բացուած օրհնութիւն կ'երդեն, մեռելները յարութիւն կ'առնեն. գացէ՛ք, ըսէ՛ք որ թո՛ղ յիշէ ինձ համար մարգարէներուն գրածները. ինք կ'ուզէ որ արագ և յայտ յանդիման յայտնէի ինքզինքս. ես չեմ վկայեր ինծի համար, և երանի անոնց որ կ'ընդունին այս վկայութիւնը և կը հաւատան ինձ ու չեն գայթակղիր : Ինք կ'ուզէ որ Խորայելի թագաւորութիւնը հաստատեմ երկրաւոր զօրութիւններով և երկրաւոր իշխանութիւնով, կ'ուզէ որ արագ պատժեմ իր թըշնամիները, նամանաւանդ զինքը բանտարկուած մատնող շնացող և չար Հերովդէսը. բայց այս չէ իմ հաստատելիք թագաւորութեանս զօրութիւնը և նպատակը. իմ թագաւորութիւնս երկնային ու հոգեւոր է. սիրտերու ու հոգիներու կը թագաւորեմ, ու իմ իշխանութեանս պաշտօնեաները զինուած չեն սուրով, հուրով, այլ ողորմութեամբ, բարութեամբ և մարդասիրութեամբ զինուած են, և սրտերու ու հոգիներու կը խօսին :

Յիսուս՝ այսպէս՝ պէտք չգաց շատ մեղմ յանդիմանութիւն մ'ընել Յովհաննու և անոր աշակերտաց : Բայց հազիւ մեկնած էին, Յիսուս զինքը չըջապատող ունկնդիրներուն գովեստով սկսաւ խօսիլ անա-

պատի մեծ մարգարէին՝ Յովհաննու մասին. այնպէս որ պատգամաւորներուն միջոցաւ ըրած մեղմ յանդիմանութեան վրայ ունկնդիրներուն սրտին մէջ ծնունդ առած արհամարհանքը Յովհաննու դէմ, անմիջապէս փարատեցաւ. և աւելի մեծ համարում և համակրութիւն ունեցան անոր հանդէպ :

Ի՞նչ կը կարծէք որ ըլլայ Յովհաննէս, ո՛վ ժողովուրդ : Յորդանանու հովիտին մէջ բուսած երկայն ու նուրբ եղէգներուն պէս հովէն տատանող անհաստատ հաւատքի տէր մէկը : Դուք եկող պատգամաւորներու հարցումէն հետեւցուցիք որ թերեւս Յովհաննէսի հաւատքը խախտած է, բայց այդպէս չէ. ո՛չ հիացման և ոչ հաղածանքի հողմը կարող են շարժիլ զինքը և խախտել իր հաւատքը. նա անդգբուելի հաստատուն մարդ է : Հապա ի՞նչ կարծեցիք որ եղած ըլլայ Յովհաննէս. փոփոկ հանդերձներ հագնող մա՛րդ մը, մեղկ ու մարմնաւ պաշտ մէկը, որ չի կրնար բանտարկութեան տակալ. այդպիսիները չեն կրնար ուղտի հանդերձ, կաշիէ գօտի հագնիլ և անապատներու մէջ անանիւ մարախով և վայրի մեղրով. այդպիսիներ թագաւորներու ապարանքներուն մէջ կրնան ապրիլ : Հապա ի՞նչ տեսնելու ելաք. մարգարէ՞. այո՛, կ'ըսեմ ձեզի, ես սլ ձեզի պէս կ'ընդունիմ թէ մարգարէ մըն է տեսածիդ, բայց նա մարգարէ է մի աւելի մեծ արժանիք ունի, ինչու որ ինծի յառաջընթաց ու կուրապետ եղաւ, իմ պատգամաւորս ու հրեշտակա եղաւ, իմ պաշտօնիս համար ճանապարհ պատրաստեց, նա իմ քարոզութեանս համար մարդոց միտքերը լուսաւորեց, և իսկ և իսկ հրապարակաւ ինձ համար վկայութիւն տուաւ. անոր համար Յովհաննէս մարգարէներէն աւելի մեծ է և Հին Կտակարանի վերջին մարգարէն է. բայց Նոր Կտակարանի մէջ, Աստուծոյ արքայութեան մէջ ամենափոքրն Հին Կտակարանի ամենամեծ համարուածէն աւելի մեծ է, ոչ թէ բարոյական կամ մտաւորական գերազանցութեամբ, այլ հոգեկան յատկութեանց գերազանցութեամբ. ինչու որ Նոր Կտակարանի ամենաաղքատ ան-

դամը դէպի Աստուած ունեցած յոյսով և անկեղծութեամբ աւելի՛ հարուստ է քան թէ Հին Կտակարանի ամենամեծ մարգարէն . անոնք որ բռնուն փափաք ունին պատ-
րաստուած արքայութեան մէջ մտնելու , անոնք որ քաղցեալ և ծարաւի են արդա-
րութեան համար , անոնք որ պատրաստ են իրենց խաչը առնելու և իմ ետեւէս
գալու , այնպիսին՝ որ միայն ձեռնհաս պի-
տի ըլլան մտնելու Աստուծոյ արքայու-
թիւնը :

Լսողներէն շատերը , մանաւանդ մաք-
սաւորները և հասարակ ժողովուրդը , Յով-
հաննէսի վրայ ըստուած գովասանական խօս-
քերն ուրախութեամբ և շնորհակալութեամբ
ընդունեցին : Բայց կային նաև այնպի-
սիներ որոնք օրէնքի ուսուցիչներ և ու-
սումնասիրողներ էին , ու Քրիստոսի այս
խօսքերը արհամարհանքով ու դժգոհու-
թեամբ լսեցին : Այդպիսի դժգոհ՝ վրդովուած
բնավորութիւն ունեցողներն անկարելի է որ
մէկ բանով գոհացնել : Աստուած իր ամէն
իմաստութիւնով , ամէն կողմէն և զանա-
զան ճամբաներով անոնց փրկութեան հա-
մար մարդ դրկեց , բայց ի զո՛ւր : Յովհան-
նէս անոնց մօտ եկաւ ճգնաւորական խիստ
պահեցողութիւնով . ո՛չ կ'ուտէր և ո՛չ կը
խմէր , հրաժարած համադամներէ , խոր-
տիկներէ և զինիէ (Ղուկ . Է . 33) Նաղովրհ-
ցիներուն պէս : Սակայն այնու ամենայնիւ
ըսին անոր համար թէ «Դե կայ անոր ներ-
սիդին» . Յիսուս եկաւ տօներու ու հարս-
նիքներու մասնակցեցաւ , ըսին անոր հա-
մար ալ թէ «Ահա ուտող և արեցող մարդ
մը» (Մատթ . ԺԱ . 16 — 19 . Ղուկ . Է ,
31—35) : Սակայն իմաստութիւնն իր որդ-
ւոյ ձեռքով միշտ կ'արդարանայ . վասն զի
այդ հասարակ յիմար և չոր մարդոց մէջ
կը գտնուին «իմաստութեան որդիներ» ,
իմաստուններ , որոնք կ'արդարացնեն այ-
սինքն կ'ընդունին և կը ճանչնան Աստու-
ծոյ արդարութիւնը իր բոլոր ճամբաներուն
մէջ : Թո՛ղ անմիտները անոնց կեանքը խե-
ղագորութիւն համարին , իսկ վախճանը
անպատիւ . սակայն անոնցմէ փոքրագոյնն
Աստուծոյ որդւոց կարգին մէջ պիտի դաս-
ուի , և վիճակը՝ սուրբերուն հետ պիտի
համարուի :

ՆԵՒՈՆԴ Մ . ՎՐԴ . ԴՈՒՐԵԱՆ

Հետեւողութեամբ
ՀԱՅՐ ՖԱՐՄԱՐ

ԿՐՕՆԱ-ՊԱՏՄԱԿԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ

(Նար . Ասիոտդ թիւեկ եւ վերջ)

Սիւնեցիի այս գրուածքը գրեթէ առա-
ջինն է Քաղկեդոնական խնդրին վերաբե-
րութեամբ Հայոց կողմանէ պաշտօնական
հանգամանքով գրաւոր ձեւի տակ եղած
վիճաբանութիւններուն մէջ : Քաղկեդոնա-
կանութեան խնդիրը ծագում առած է մեր
մէջ Բաբգէն Կաթողիկոսի ժամանակ՝ որ
համամիտ չէր բնաւ նոյն ժողովի կարծիք-
ներուն : Եւ արդէն շատ մը յոյն կայսրեր
և պատրիարքներ ընդունած չէին Քաղկե-
դոնականութիւնը , և Զինոնի հենոտիկոնն
ալ ազատութիւն տուած էր ամենուն՝ նախնի
երեք ժողովները միայն ընդունելու : Բնա-
կան էր որ Յունաց այս դիրքը բռնած ա-
տեն Հայերն ո՛ւր աւելի համարձակութիւն
պիտի գտնէին սերտիւ փարելու իրենց նա-
խապէս ընդունած դաւանութեան : Բաբ-
գէն Կաթողիկոսէն վերջը նստող Կաթողի-
կոնները միշտ նոյն ընթացքը բռնեցին խնդ-
րոյն հանդէպ . բայց երբ Հերակլ տարբեր
քաղաքականութեան մը հետամուտ եղաւ ,
եզր տկարացաւ այն ատեն : Աւելի վեր-
ջերը Ը . դարուն էր որ Օճնեցի կաթող
զգաց ինքզինքը նախկին Եկեղեցին զօրա-
ցնելու , և այդ ժամանակին ոգւոյն հա-
մապատասխանող միտք մըն էր Ստեփանոս
որ գրեց այս թուղթը :

Խնդիրը սակայն տեւի պարզելու հա-
մար ըսենք թէ ոչ յունական Եկեղեցին
Նեստորական էր Լեւոնի ոտամարով , և
ոչ Հայոց Եկեղեցին Եւտիքական . վէ-
ճին բուն պատճառը զիրար չհասկնալն
էր . թերեւս աւելի կանուխ ժամա-
նակներու մէջ Հայք և Յոյք զիրար
հասկնային , եթէ Քաղկեդոնի ժողովը զուտ
կրօնական հանգամանք մը ունեցած ըլլար .
բայց որովհետեւ Յոյք տեսակ մը բռնու-
թիւն կը բանեցնէին կարծիքներու վրայ ,
և անափառութեանց ընդարձակ տեղ մը

տուած էին իրենց մտքին մէջ, հետեւաբար դժուարին եղաւ երկուստեք համաձայնութեան մը գալ:

×

Համառօտիւ ներկայացնելէ վերջ Սիւնեցին իր գրական աշխատութիւններուն մէջ, որոնք ամէն կերպով գնահատելի ծառայութիւն մը պէտք է համարուին իր ժամանակին համար, սրտի ներքին ցաւով մը կը յիշատակենք իր կեանքի վերջին մասնալ՝ զոր անցուց Սիւնեաց աթոռի վրայ բարձրանալէն վերջը:

Օրբէլեան կ'ըսէ թէ «Երանելին Ստեփանոս եկաց յեպիսկոպոսութեան ամ մի. զոր ոմանք ութ ամ ասեին» (Օրբէլեան հատ. Ա. էջ 182): Սրբ. Ստեփանոսի պաշտօնավարութեան տեւողութեանը մասին երկու տարբեր կարծիք կայ. ամէնէն հաւանականը սակայն ութ տարի պաշտօնավարած ըլլալն է. և այս հաստատող ապացոյցներ կան արդէն: Ստեփանոս՝ եպիսկ. կ'ըլլայ 728ին որ նոյն ատեն թուականն է Օձնեցիի մահուան, և իր մահը կը պատահի 735ին, հետեւաբար ճիշտ է ութ տարի պաշտօնավարած ըլլալը: Բաց աստի՝ այն կինը որ սպաննեց զՍտեփանոս՝ քանի մը անգամ խրատուած էր անկէջ, ինչպէս կ'ըսէ Օրբէլեան, արդ. եթէ մէկ տարի ընդունինք Ստեփանոսի եպիսկոպոսութիւնը, ինչպէս կ'ըլլայ որ անիկա մէկ տարուան մէջ քանի մը անգամ առիթ կը գտնէ այդ կինը յանդիմանելու, երբ մանաւանդ իրմէ շատ հեռի կը գտնուէր ան:

Ըստ պատմութեան Օրբէլեանի, յիշեալ կինը կը բնակէր Եղեգեաց ձորի Մոզան աւանին մէջ: Ստեփանոս որ քանի մը անգամ այցելած էր հոն, տեսնելով այդ կնոջ անկարգ ընթացքը, զգուշացուցած էր զանիկա՝ զգացնելով անոր իր գործին անպարկեշտութիւնը, բայց անիկա երբեք չէր զղջացած. և յետոյ վերջին անգամ ըլլալով երբ նորէն յանդիմանեց ու տեսաւ որ առանց իր խրատներուն մտիկ ընելու իր ընթացքը կը շարունակէր, այն ատեն բանադրեց զնա և Աստուծոյ արդարութեան և մարդոց անարգանքին յանձնեց: Ու երբ՝ հ'ըսէ պատմիչը՝ բանադրանքը կոտորելէ

ետքը գիւղէն դուրս ելաւ և օդին տաքութենէն հանգիստ և զովութիւն փնտռելու համար Աւագ Ակն կոչուած տեղը գնաց, պոռնիկը յարմար առիթ սեպելով՝ յորդորեց իր հոմանին, և սուր մը տալով անոր ձեռքը, զրկեց դէպի հոն որ երթայ սպաննէ եղբւր: Պատմիչը այս պարագան նկարագրած ժամանակ կ'ըսէ թէ երբ կնոջ հոմանին սուր ի ձեռին մօտեցաւ եղբուն՝ որ ուռնիքի վրայ դրուած մահճի մը մէջ կը քնանար՝ տեսնելով անոր շունչին բոցի նման ցոլանալը, և վախնալով այն հրեշտակէն որ անարին մօտ կը հսկէր, կը դողայ և թրմութիւն մը զգալով ամբողջ մարմնոյն վրայ՝ սարսափահար կ'իջնէ վար: Կինը՝ տեսնելով որ հոմանին երկիւղէն չէր կրցեր բան մը ընել, կրկին անգամ կը խրատէ զանի անպարկեշտ խոստումներ ընելով. հոմանին դարձեալ կ'երթայ սուրը ձեռքը, բայց այս անգամ աւելի սոսկացած՝ ոչ միայն չի կրնար վնաս մը հասցնել եղբուն՝ այլ երբ ծառէն վար իջնել կը փորձէ, բռնորովին ուժաթափ կը գլորի ծառէն վար: Այն ատեն լկտի կինը ինք կ'երթայ եպիսկոպոսին քնացած տեղը, և կատաղաբար վրան յարձակելով կը սպաննէ զանի:

Ահա այսպէս տեղի կ'ունենայ Ստեփանոսի մահը՝ սրուն մանրամասն պարագաները ո՛րքան ալ զրոյցի հանգամանք ունենան, սա ստոյգ է որ նա սպաննուած է կինէ մը որ անոր տուած բարի խրատները արգելք մընկատելով իր անկարգ ընթացքին, աւելի ազատ ըլլալու համար իր գործին մէջ վերջ կուտար անոր կեանքին:

Ու այս կերպով Սիւնեաց աթոռը լըպիրշ կնկան մը անզուսպ պոռնկութեանը զոհ տուաւ իր ամենէն արժանաւոր ժառանգը: Ստեփանոս որ իր եզակի հոմաճարին շնորհիւ յաջողեցաւ քիչ ժամանակի մէջ իր սնունդին շուրջը հաւաքել ամբողջ աշխարհի մը սեռն և անկեղծ սէրը, տալակոյս չկար որ շատ աւելի մեծամեծ ծառայութիւններ պիտի կարենար մատուցանել իբրի ժողովուրդի հովիւ և վարդապետ՝ եթէ երբեք վրայ չհասնէր իր տարածած մահը:

ԵՂԻՇԷ Վ. ԽԱՉԵՐԵԱՆ



Ողջո՛յն, ով ծառք, դուք, սնոյն կանաչով մը պատկուած,
 Ողջո՛յն տերեւ դեղնագոյն, դուք ցան ու ցիր աստ անդ,
 Ողջո՛յն օրեր գեղեցիկ. բնութեան սուգն համաստրած,
 Իմ վիշտերու պաշտան են. 'չ աչխո հանոյ մանաւանդ :

Միայնութեան ճամբուն վրայ, կ'երագեմ ես օր քան զօր,
 Բայց իբրեւ վերջին անգամ, կը սիրեմ դարձեալ տեսնել,
 Սա՛ արեգակը թօղոյն, որուն ճաճանչը անգօր
 Մթութիւնը անստիկ հագիւ կրնայ փարատել:

Ո՛հ, բնութեան հոգեվարքի, սա՛ օրերուն մէջ աշնան,
 Աւելի հրաշք կը գտնեմ՝ մէջ տղարկուած աչերուն.
 Բարեկամի հրաժեշտը, ու վերջին ծիծաղն է այն,
 Ո՛հ կանխահաս ու անգութ մահով՝ փակուած շրթերուն:

Այսպէս ես ալ գրեթէ միշտ մեռնելու կազմ ու պատրաստ
 Յար ողբալով կոծելով, յոյսերու վրայ անպասկ.
 Կը վերադառնամ դարձեալ. ու տեսչոս աչքով մ'ընդոս,
 Բարիքները կը դիտեմ, որոնցմէ զուրկ մնացի աստ:

Երկիր, արեւ, ձորակներ, բնութիւն անոյշ ու շփեղ,
 Դերեզմանիս եզերքէն շէք մը արցունք պարտիմ քեզ.
 Մեռեալի մը աչերուն, արեւն ունի այնքան գեղ,
 Օղը ա՛յնքան խնկաւե՛տ, ա՛յնքան ջիւն է յունի դէպ:

Այժմ ես ալ կը բաղձամ քանից ցերուր այս քաժակ,
 Ուր կան հիւրեր Նեկտարի ու դառնահամ մրուրի,
 Յասակը այդ քաժակին, ուրիշ կ'ընկեր կեանքն հաւնակ
 Թերեւս մնա՛յ ինձ համար, միակ կարիք մը մեղրի:

Թերեւս ինձ ապագան, պահած ըլլայ
 Երջանկութիւն մը, որուն յոյսը չունիմ ես երբեք,
 Թերեւս ըլլայ մարդոց մէջ ինքն անծանօթ մի հոգի
 Ու հասկնայ իմ հոգիս. խօսի արհիւ վշտաբեկ:

Կը քառամի ծաղիկը, տալով հոտը գեղիւնին,
 Տալով կեանքին, արեւին. այս իր հրաժեշտն է միակ.
 Ես կը մեռնիմ եւ հոգիս շիջանելու վայրկեանին,
 Կը մարի ձայնի մը պէս, ինչու ու քաղցրանուագ:

Թարգմ. զաղղ .

ՍՈՒՐԷՆ, ՎԱՐԴ, ԴԱԼԷՄԵՍՆ

ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՈՒԷՏ Խ. ՄԻՍԱՔԵԱՆ

(ԱՆՏԻՊ ՔԵՐԹՈՒԱՄՆԵՐՈՒ ԱՌԹԻՒ)

Ա.

Գրագէտ Յ. Գ. Մըմըրեան՝ լրակատար կենսագրական հատորով մը՝ 1907ին, ծանօթացուց անցեալ դարու մտաւորական է՛ն կորովի ուժերէն մէկը՝ Պուէտ Խաչատուր Միսաքեանը, որուն կեանքը աւելի լուսանկարած էր, իսկ անոր գրական երկասիրութեանց վրայ երկարօրէն ծանրացած չէր ուսումնասիրութեամբ։

Ճաւալի դժբախտութիւն մըն է հեղինակներու գործերուն անտիպ մնալը։ Տակաւին չունեցանք գրական յանձնաժողով մը, որ կարենար թիւն տար հրատարակելու մեր հին գրիչներու անտիպ էջերը։ Կէտ մը որ արժանի է ծեծուելու պարբերական մամուլին մէջ։

Պուէտ Խաչատուր Միսաքեանը դատելով իր տպուած գործերէն, կարող չենք մեծ գաղափար մը կազմել իր մեծ նշանակութեան վրայ։ Պէտք է գիտնալ որ այդ գրագէտ դէմքը՝ ունի անտիպ շատ գործեր, իր տաղանդաւոր կենսագիր Մըմըրեանը կը գրէ կենսագրական հոտորին մէջ. «Իր պատմած քանի մը մանր դէպքերը, յիսունի չափ ինքնագիր նամակներ, երկու հարիւրի մօտ բարեկամական թուղթեր ու 1858էն մինչև 1861ի Մալխաներուն մէջ շարք մը բանաքննականներ կուտան մեզի դադափար մը այդ քանն և հինգ տարուան գործունէութեան վրայ։ Ասոնցմէ զատ՝ ձգած է երկու-երեք հազար էջի մօտ ձեռագիրներու կտրատ կտրատ չեղջեր, որոնք գրած է Բարիզի մէջ իր պարապոյ ժամանակները, և կ'երևի թէ կը պատրաստէր իր տնօրէնութեամբն հրատարակելի Հանդէսի մը համար։ — Վէպեր, թարգմանութիւններ, ճաշակներ, տաղեր ընտիր աշխարհաբարով մը, որոնցմէ Սոփիան ու Կադ Սասանաներն և Հայկանուշից ժողովը խմբագրուած են Ե-

պիմինեդէսի կուռ ոճովը։ Այս ձեռագիրներուն մեծ մասը՝ իր ստացուած 2000ի չափ գիրքերուն հետ կը գտնուի արդ' (մինչև 1901 Յունուարի 1 թուականը) Սկիւտար Ս. Խաչ վարժարանի կից քարուկի թանգարանը։ Իր այս գործերը բնականաբար կարօտ են քննական ուսումնասիրութեան. առ այժմ չնորհիւ յարգելի գրագէտ Մըմըրեանի, կրցայ ձեռք ձգել քերթուածներուն հաւաքածոն, որուն վրայ յօդուածներու շարքով մը կը ծանրանամ։

* *

Միսաքեան՝ տակաւին վարժարանի պատանի մը, կը կոչուի Պուէտ. այդ փառապանծ անունը իրեն կուտայ Յակոբիկ աղա Մանուէլեան։ Միսաքեան, Սկիւտարի ձեմարանին բացման առիթով, կ'արտասանէ քերթուած մը. այնքան հաճելի կ'անցնի որ յիշեալ Մանուէլեան անձնաւորութիւնը, հանդիսականաց ներկայութեան կ'ըսէ պատանի Միսաքեանին. «Շատեր արդէն կը կոչուին վարժապետ անունով, և դուն՝ որովհետեւ լաւ ուսումնաւոր ալ կը գրես՝ արժանի ես Պուէտ տիտղոսին, այսուհետեւ Պուէտ պիտի մականուանենք քեզ»։ Հետաքրքիր է դիտնալ որ Միսաքեան արդեօք իրօք արժանի է այդ տիտղոսին։ Ժամանակը չէ կրցած ստուգել թէ ո՞վ է իրօք բանաստեղծը. հին ու նոր գրողները երբ տաղաչափական գրութիւն մը ունեցած են, քերթողի համբաւէն զրկուած չեն։ Ընթերցողներու թուէն աւելի բանաստեղծ ունեցած ենք։

Մըմըրեան բոլորով աշտկերտը Միսաքեանին՝ շատ բնական է որ լաւ ուսումնասիրած է իր վարպետին բանաստեղծական հոգեբանութիւնը. կարենալ է գիտնալ թէ ինք ի՞նչ գաղափար ունի Պուէտին քերթողական կարողութեան վրայ։ Մըմըրեան իր գրքին վերջաբանին մէջ գրած է. «Իրեւ բանաստեղծ՝ չէր սլակէր իրեն եռանդ ու տաղանդ, բայց կը սլակէր տիրապէս հանձար ըսուած սուր հոգեւետութիւնը, կամ թէ՛ ըսենք՝ իր դրոյսառեան հին կաղապարին ու յանգամովիկ ձեւերուն մէջ՝ կ'ընկերկէր ու կը խափանուէր հոգիի այդ

աղամանդեայ հանգամանքն հատու, որ
ընդհանրապէս հաշտ չէ արուեստի հետ։
Տաղաչափական արուեստին մէջ՝ քիչերը
կրնան համամատուիլ իրեն 19րդ դարու նախ-
նեաց լեզուով գրող քերթողներէն։ Իր
ամէնէն հարեւանցիկ տաղերն իսկ ունին
միշտ լեզուի կողմէն՝ առնական ներդաշ-
նակութիւն մը և՛ ձևի կողմէն՝ Ճիւղգոյի
(0)ին արագ ու սահուն ոլորքը։» Մրմը-
եան դեռ աւելի կ'ընդլայնէ իր հիացումը,
ու չի վարանիր գրելու. «Ինք Հ. Արսէն
Բագրատունին ու Հ. Եղուարդ Հիւրմիւզ
անգամ՝ ետ կը մնան իրմէն ճկունութեան,
յանգի ճոխութեան ու մերթ իմաստի լի-
ութեան մասերուն մէջ»։ Ըստ Մրմրեանի՝
իր Պուէտ վարժապետը իւրացուցած է Հ.
Արսէն Բագրատունիի ու ժղնութիւնն և Հ.
Եղուարդ Հիւրմիւզի փափուկ ներդաշ-
նակութիւնը։

Աշակերտի ազնուական հիացումը ի
նկատի առնելու է. մինք կը քննենք Պու-
էտին քերթուածները. և որքան հնար է
անաչառ մնալու պարտականութիւնէն չենք
թերանար։

Միսաքեան ունի թաղմանական քեր-
թուածներ. պէտք է գիտնալ որ հին սովո-
րութիւն է քերթողներու նուագել տալ
հարազատներու սուգը. քաշկռտուած քեր-
թուած մը կ'ըլլայ, երբ քերթողը չզգար
մեռելին կորուստը. հարազատը միայն կրնայ
անկեղծ ոլը մը նուագել. տակէ դուրս
կարելի չէ պահանջել անթերի զգացում։
Խարտիչագեղ մանուկ մը իր մեռած մօրը
ծոցը կը փոխադրի. այդ առթիւ Միսաք-
եան ճոռամ ոտանաւոր մը կը գրէ. ուր
կը մատնանշեմ սա տողը։

«Եղաւ ի հողոյն արգանդ մարդարոյս
Ձեզուն ի յոյս»

Հողը մարդարոյս արգանդ մը կը կոչէ.
այդ յղացում է։ Միսաքեան ձևի անու-
շաղիք, երբեմն բնատուր քերթողական
գոյներ ստեղծած է։ Թաղմանական ուրիշ
մէկ քերթուածին մէջ կարգ մը միջակ ու
աննշան տողերէ վերջ կը գրէ։

«Որ անցանէք
Աստուտ ընդ այգն եւ նոյ երկի,
Ըստ Միսաքեան

Բանաստեղծին՝ զայս տապան
Ձրով Պորակի
Ոռոցեցէք երբակի,
Ձի մեռելոյդ
Խելք ու ճոռացի ցալելոյթ։»

Մենք ըսած ենք, ու կը կրկնենք մեր
ըսածը, թէ շատ բանաստեղծներ, յանգի
գիւտերուն համար, յօշոտած են քերթո-
ղական մտքի շնորհքը։ Նոյն յօշոտումը կը
տեսնենք Միսաքեանի յիշեալ տողերուն
մէջ։

Պուէտը քնար սիրտ մը չունէր, ըմբոստ
մըն էր. հարուստին երկրպագու չէր, միայն
ա՛յն ատեն կը դրուատէր հարուստը, երբ
ան իր դրամը օգտակար կ'ընէր մտաւորա-
կան կրթութեան։ Ամբողջ հայ մամուլը
սքանչացումով կը փառաբանէր Լազարեան
ազգատոհմի ճեմարանական ձեռնարկը։
Միսաքեան Բարիդի մէջ կը շարժէ իր քը-
նարը, և անկեղծ զգացումով գովեստի պը-
սակ մը կը հիւսէ Լազարեան ձեմարանի
վեհալն Սաչատուր բարերարին։ Այդ քեր-
թուածին մէջ չկայ գրական կամ քերթո-
ղական նորութիւն մը, ամբողջովին հիւ-
ցում մըն է որ կ'ուղղուի այդ բարերարին։
Իր այդ ոտանաւորով միանգամայն կը
զարնէ ամէն հարուստի դուռը, որպէս զի
կրթական գործի մասին օրինակ առնեն Լա-
զարեաններէն։ Կը գրէ.

«Այլ հրուշակեալ նոյ արարսըդ վըսեմ,
Ապաստան ի գրիչ թէպէտ եւ նըսեմ,
Դուն նրկատեցից գործել յարածամ
Ողորիլ գորս կեան ի նըսեմ փարթամ,
Մի՛ գանձիլ յումպէտս, մի՛ ճշղել կարի,
Մի՛ զըլմալ ումեք ի լուռն կարիս,
Յորմէ եւ ազգէ իցէ նա յաստիս,
Մի՛ ունել սիրտ կարծր ընդ կիրս ազգայնոց,
Որ տըւայտուեման տոչորին ի հնոց,
Մի՛ թողուլ զնոսա անպատըսպարան,
Մի՛ բընու ժուժել նոցին կորըստեան,
Կազդուրիլ զմանկուոյն դեռարոյս հասակ,
Կուռ նոցուն գործել զբանին վահանակ,
Ձի արիասցին մարտին ժուժկալիլ,
Որ սպառնայ ըզլայ անունն եղծանել»։

Գիտութեան, կրթութեան և դաստիա-
րակութեան կրակ մ'ունէր իր մէջ։ Բարիդ,
մտաւորական վառարանին կեդրոնին մէջ,
կը մեծնար Միսաքեանը. իր աչաց առջեւ

էր իր Հայրենիքի մտաւորական անկումը. կ'ըմբռնէր թէ ո՛րքան պէտք է մտաւորական զարգացումը, ու այդ մտքով բռնկած՝ Լազարեան իրաչափութիւն հետեւողներ կը փնտռէր:

Երբ մահը սեւցուցած է քնարին լարերը, Միսաքեան գառնուկի լեզու մը կը գործածէ: Վարժապետեան Ներսէս Պատրիարքի մօրը մասին տխրունի կը բանաստեղծէ, իր քնարը ամբողջովին եկեղեցականութիւն ու երկինք կը բուրէ. իմաստասիրական համակերպութիւն կը քարոզէ:

ԱՏՐՈՒՇԱՆ

ՆՈՐԱՊՍԱԿ ՍՐԲԱԶԱՆՆԵՐԸ

Ց. ՄԵՐՏԻՉ ԵՊԻՍԿ. ԱՂԱՒՆՈՒՆԻ

Ծնած է 1868ին Պարտիզակ, ուր ստացած է նախնական կրթութիւնը, և 1884ին ուսուցիչ եղած է ազգ. վարժարանին մէջ: Զորս տարի նոյն պաշտօնը գոհացուցիչ կերպով վարելէ ետքը, 1888ին սարկաւազ ձեռնադրուած է Նիկոմիդիոյ Առաջնորդ Տ. Ստեփանոս Արքեպիսկ. Յովակիմեանէ, ուրկէ 1890ին վարդապետ ձեռնադրուած է Նիկոմիդիոյ մէջ, իր միաբան Արմաշու, հաւանութեամբ վանահայր և Կ. Պոլսոյ Պատրիարք Տ. Խորէն Արքեպիս. Ալըգեանի: 1892էն 1894 վարած է Նիկոմիդիոյ առաջնորդական ընդհ. փոխանորդութիւնը, և մասնաւորապէս հակողութեան կոչուած է Զէնկիլէրի Ս. Մինաս եկեղեցիին շինութեան: 1895էն մինչև 1905, տասը տարիներ Քէօթահեայի և Աֆիոն Գարահիսարի առաջնորդական տեղապահութիւնը վարած է, և այդ չրջանին, ուրիշ օգտակար ծառայութիւններէ զատ, յաջողած է տեղւոյն գաղթականութեան օժանդակութեամբ և նպաստով՝ ձեռնարկել և ի գլուխ հանել էսկիլէհիբի քարուկիր եկեղեցիին շինութիւնը, Հինգ տարիէ ի վեր կը վարէ Եգիպտոսի Հայոց առաջնորդութիւնը. և իր արդիւնաւոր պաշտօնավարութեամբ այդ պատուական բայց զժուարհած գաղութին կողմէ գտած համակրութեան արդիւնքն այն

եղած է որ տեղւոյն Գաւառ. Ընդհ. Ժողովին որոշումով և հաւանութեամբ Ազգ. Կեդր. Վարչութեան ղեկայ Ս. Էջմիածի եպիսկոպոսութեան աստիճանն ստանալու, ըստ հրաւիրանաց Ն. Ս. Օծութիւն Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին:

Գրականութեան եւս օտար մը եղած չէ Տ. Մկրտիչ Եպիսկ. Աղաւնունի: Հետաքրքրութեամբ կարդացուած են ժամանակին ազգ. թերթերու մէջ իր «Ճանապարհորդական Տպաւորութիւնները», երբ կը վարէր Կուսինայի և Աֆիոն Գարահիսարի առաջնորդական տեղապահութիւնը: Ունի փոքր երկասիրութիւն մըն ալ՝ Տղոց Կրօնագիտութիւնը:

Տ. ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿ. ՄԱԶԼԵՄԵԱՆ

Ծնած է Պարտիզակ, 1870ին: Մկրտութեան անունն էր Արամ: Նախնական կրթութիւնը առաւ գիւղին ազգ. վարժարանին մէջ, որուն տեսչութիւնը 1880ին կը յանձնուի Ամեն. Դուբեան Սրբազանի: 1887ին ընթացաւարտ ըլլալով, ուսուցիչ կը կարգուի վարժարանին, ուր քանի մը տարիէն տէր կ'ըլլայ խորունկ ազդեցութեան: 1892ին Պարտիզակի Ս. Յակոբ եկեղեցիին մէջ Նիկոմիդիոյ Առաջնորդ Տ. Ստեփանոս Ս. Արքեպիսկոպոսէն սարկաւազ ձեռնադրուելով, մէկ կողմանէ կը քարոզէ Ս. Եկեղեցիին մէջ, միւս կողմէ կը շարունակէ վարժարանին տեսչական պաշտօնը: 1894 Յունիս. 20ին Պարտիզակի մէջ վարդապետութեան կարգը կ'ընդունի նոյն Արքեպ. էն և կը կոչուի Տ. Կարապետ. ու դարձեալ Քարողիչ-Տեսուչ կը մնայ մինչև 1895 տարիին վերջերը, կարճ միջոցի մէջ հասցնելով 20ի չափ ընթացաւարտներ:

1896ին, եղած գիմուսներուն վրայ, Քարողիչ-Տեսուչի կրկնակ պաշտօններով փոխադրուեցաւ Ատարազար, ուր Ս. Լուսաւորիչ և Ս. Կարապետ թաղերու մէջ 1896-99 արդիւնաւորապէս գործեց, հասցնելով 70ի չափ երկսեռ ընթացաւարտներ: 1897 Նոյ. 30ին ընդունեց Ծայրագունութեան աստիճանը: 1899-1905ին

վարեց նիկոմիդիոյ թեմական փոխանորդութեան պաշտօնը։ Այս շրջանին մէջ, Կարապետ Ծ. Վ. Վիճակին ամէն անկիւնները կը հասնի, կը քարոզէ, Ազգ. Վարչական մարմինները կը կազմէ, կը կարգադրէ թեմական-կրթական, եկեղեցական խնդիրներ։ Յիշատակելի է որ, շնորհիւ իր կորովի գործունէութեան, ի դերն ելած են Կէլվէի Էջմէ և Յալովայի Քարայի զիւզերուն, և Օվաճրգի և Սալանպէկի մէջ, իրարու հետեւէ ծագած դաւանափոխական շարժումները։

Կեդր. Խառն Ժողովի որոշումով Պան. տրամ-Պալքէսի միացեալ Վիճակին Ա. ուղին. Տեղապահ կարգուելով, 1906 Յուլ. 1ին կը հասնի Պանսրմա և կը ձեռնարկէ նոր պաշտօնին։ Թեմը, հակառակ շատ կանուխէն Ազգ. Կեդր. Վարչութեան կողմէ միացեալ որոշուելուն, իր նախորդները չէին յաջողած իրականացնել զայդ։ Սակայն Կարապետ Ծ. Վ. յաջողութեամբ ի գլուխ կը հանէ այդ միացումը, և Միացեալ Վիճակի հիման վրայ կը կատարէ Գաւառ. և Վարչական Ժողովներու ընտրութիւնը։ Իր պաշտօնավարութեան սկիզբները թեմը զանելով անկազմակերպ, բոլոր վարժարաններն ալ խոշոր տուրքերու տակ, ուսումնական մակարդակն ինկած, կը յաջողի Ազգ. Օրէնքի համեմատ վարչական մարմիններ կազմել, հանգանակութիւններով և այլ միջոցներով դպրոցներու պարտքերը վճարել և ծրագիրներ պատրաստել, հետզհետէ անոնց ուսումնական վիճակը բարելաւել, այնպէս որ Սէօուերու վարժարանը յաճախող աղջիկները կը սկսին վերագաճնալ ազգ. վարժարան։

1908 Օգոստ. 1ին Միացեալ Վիճակաց կրկին Գաւառ. Ժողովներու քուէից բացարձակ առաւելութեամբ կ'ընտրուի Ա. ուղինորդ։ 1910 Յունիսին, կրկին Գաւառ. Ժողովները ուրոյն ուրոյն նիստ ընելով միաձայնութեամբ կ'որոշեն եպիսկոպոսացման վկայական տալ։

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ ԻՐԱՆԱՍՈՒԹԻՒՆ ՄԸ ՎՏԱՆԳԻ ՏԱԿ

Ֆեռադի և Ինքիզալի գործողութիւններու առթիւ Պատրիարքարաններու Իւմուխապէրին պէտք չմնալու պետական որոշումը, սրու մասին գրեցինք անցեալ շաբթու, լուրջ խորհրդակցութեանց առարկայ եղած է ազգ. վարչական շրջանակներու մէջ։ Տնտեսական Խորհուրդը Քաղաք. Ժողովին ուղղուած գրով կը ծանուցանէ թէ կառավարութեան խորհած միջոցին գործողութիւնը մեծ վնաս կը բերէ Պատրիարքարանի պիւտժէին, որ տարեկան 7000 տկրի պէտք ունի նոր կաղմակերպութեան համար, և կառավարութիւնը եթէ տտոր կէսին մօտ գումար մը կը վեկչէ, նոյնքան գումար մը պէտք է ցոյց տայ՝ այդ բացը գոցելու համար։ Բայց ինչդրն այս կերպով ներկայացնելով՝ չի յուսացուիր նպաստաւոր ելքի մը յանգեցնել։ Հարկ է ինչդր ընել Պատրիարքարանի իրաւասութիւնը, նոյն իսկ Սահմանադրութեան սրամադրութեամբ, որու համաձայն ազգահամարի գրասենեակին պաշտօնն է թէ՛ ծանապարհորդութեան և թէ՛ ուրիշ անձնական գործողութեանց համար պէտք եղած վաւերական թուղթերը տալ, նաև ծնունդեան, ամուսնութեան և վախճանմանց թուղթերը տալ։

Քաղաքական Ժողովն անցեալ ուրբաթի նիստին մէջ խորհրդակցութեան առարկայ ըրաւ խնդիրը, և հարկ տեսաւ որ կատարութեան դիմում ըլլալէ առաջ, դիւանին մէջ քննուին ցարդ այս խնդրոյն նրկատմար գրութեանը, ինչպէս կ'ընէ եղեր Յունաց Պատրիարքարանը, որպէս զի գործը պաշտպանութի ոչ միայն իբր գրամական խնդիր մը, այլ իբր առանձնաշնորհմանց և իրաւասութեան խնդիր։

Մինչև այս տողերը գրուած ժամանակ, (Դշ.) լուր չկար թէ Պատրիարքարանը ունէ դիմում ըրած է ներկայ խնդրոյն մասին։ Իրաւ է որ ցարդ Ազգ. Պատրիարքարանին, ինչպէս ուրիշ Պատրիարքարաններու, զե-

կուցում եղած չէ, և նոյնպէս թաղապետական շրջանակներու ալ տեղեկութիւն տրուած չէ, և տակաւին Պատրիարքարաններու Իւմուխապէրներու վրայ կը կատարուին գործողութիւնները, բայց ասիկա չի նշանակեր թէ լուրը սխալ, այլ պարզապէս ձեւակերպութիւնն է որ յապաղած է: Ամէն պարագայի մէջ պէտք է փութալ, կանխել պաշտօնական գեղեցումի մը հազարդուիլը:

* * Եւ. օր Հայ-հռոմէականաց Պատրիարքարանի գործակատար Կէտիկիան Վ. Ս. Պատրիարք Հօր ներկայացաւ, և հազորդեց թէ Հայ-հռոմէականաց Պատրիարքը իր իրաւասութեան յենով պիտի բողոքէ, և կ'ուզէ գիտնալ թէ ի՞նչ է Հայոց Պատրիարքին որոշումը: Ս. Պատրիարք Հայրն հազորդեց Քաղաք. Ժողովին որոշումը, և աւելցուց որ ազգը պիտի պնդէ իր իրաւասութեան վրայ: Գործակատար վարդապետը աւելցուց թէ նոյնը որոշած է Հայ-հռոմէականաց Պատրիարքարանն ալ:

* * Հրէից խախտման ալ այս խնդրոյն համար դիմում պիտի ընէ կառավարութեան: Յունաց Պատրիարքարանն ալ խնդիրը կը նկատէ թէ իբրեւ իրաւասութեան խնդիր և թէ զրկանք Պատրիարքարանին՝ լաւագոյն հասցի մը: Բայց նոյն Պատրիարքարանն առ այժմ աւելի ստիպողական խնդիրներ ունի, որոնցմով, մանաւանդ հելլենապատակ ուսուցիչները պաշտօնէ չհեռացնելու ձեռնարկով զբաղած է:

* * Կը հաւաստուի թէ Թաղ. Խորհուրդներն ալ կը պատրաստուին դիմել Պատրիարքարան, որպէս զի պէտք եղած դիմումն ըլլայ կառավարութեան մօտ, պահպանելու համար երկար տարիներէ ի վեր Պատրիարքարանին վայելած իրաւունքը:

ՆՈՐԱՊՍՍԿ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ.—Անցեալ կիրակի օր Ս. Էջմիածնի մէջ կատարուած ձեռնադրութեան առթիւ եպիսկոպոսական աստիճանի բարձրացողներուն ճիշդ ցանկը կը հաղորդէ Կաթողիկոսական դիւանադպիրը Պատրիարքարան: Զեռնադրեալներն են Տ. Դանիէլ Եպսկ., Տեղապահ Երուսողէմի, Տ. Բաբգէն Եպսկ.

առաջնորդ Գաղատիոյ, Տ. Ստեփան Եպսկ. Աղաղատեան Վանահայր Կաթողի (Վան), Տ. Զաւէն Եպսկ., առաջնորդ Տիգրանակերտի, Տ. Թորգոմ Եպսկ., առաջնորդ Սերաստիոյ, Տ. Սմբատ Եպսկ. առաջնորդ Կարնոյ, Տ. Կարապետ Եպսկ. առաջնորդ Պանտրմա-Պալքէսի, Տ. Մկրտիչ Եպսկ., առաջնորդ Եգիպտոսի, Տ. Խորէն Եպսկ. և Տ. Եփրեմ Եպսկ. միաբան Ս. Էջմիածնի: Ասոնք անցեալ երկուշաբթիէն ի վեր օկսեր են իրենց առաջին պատարագները մատուցանել ուրիշ վերջ պիտի մեկնին Մայր Աթոռէն:

ԶԱՐՍԱՆՃԱԳԷՆ վերջին թղթաբերով Պալիս Սարգիս քահանայ Զաքոսեանի հասած նամակներուն մէջ կ'ըսուի թէ տեղին պէյերը կը շարունակեն նեղութիւններ տալ իրաւազուրկ Հայերուն և մտիկ չեն ընել կեդրոնական կառավարութեան կողմէ զըրկուած հրամաններուն: Տեղական կառավարութիւնը պէյերուն կողմէն է և այս մասին նոր ապացոյց մը ևս տուած է վերջին անգամ Բաշալէնք գիւղէն Հայ հարսի մը առեւանգութեան խնդրով ամբաստանուած պէյ մը ազատ արձակելով: Խարբերդի դատարանը նախագահին և երկու անդամներու որոշումով միայն, անպարտ հռչակած է այս պէյը, հակառակ անոր որ յայտնի ապացոյցներ կան մէջտեղ անոր յանցանքը հաստատող: Հարսին պարագաները սակայն դիմած են Պոլսոյ վճռաբեկատեանին: Վերջին օրերս Խարիսէնք գիւղէն երիտասարդ մը իսլամացուցուեր է, կարգ մը ամբաստանութիւններով:

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ Նախարարութեան մօտ դիմում պիտի ընէ Աղգ. Պատրիարքարանը, խնդրելով որ Հայ ղինոսորները Կիրակի օրերը զրկուին իրենց աղօթատեղիները, որովհետեւ անցեալ Կիրակի չէին զրկուած և միւս կողմէ քահանաներու ալ թոյլտուութիւն չըլլար զօրանցները մըտնելու հոգեւոր պարտականութեանց կատարման համար:

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՆԵՐՈՒՄ.—Սուլթանը, Պայրամի առթիւ ներում չնորհեց Պատուրումի բանտը գտնուող վաթուռն Հայ և Թուրք բանտարկեալներու, որոնք գա-

տապարտուած էին Ատանայի դէպքերուն առթիւ : Վարչութիւնն յատուկ թագրիրով մը Պատուարումի, Հռոգոսի բանտարկեալներուն ազատ արձակումը խնդրած էր :

* *

Ս. ՊԱՏՐԻԱՐԷՅՈՐ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ

Ս. Պատրիարք Հայրը Գշ. օր այցելից կրթական նախարարին և տեսակցեցաւ՝ 1. Ընդհանուր կերպով Մէարիֆի հսկողութեան մասին՝ հայ վարժարաններուն վրայ, 2. Քրիստոնէոս ուսանողներու այս աարի պետական վարժարանները չընդունուելուն վրայ, և 3. Ուսանողներու զինուորագրութեան խնդրոյն վրայ : Սրբազան Պատրիարքը բացատրեց թէ Պատրիարքարանը վարժարաններու գուռը չի փակեր կրթական նախարարութեան քննիչներուն առջեւ, բայց կը փափաքի որ փութանակ վարժարանաց տնօրէններուն, ուղղակի Պատրիարքարանը պատասխանատու ըլլայ, և առանց անոր գիտութեան կրթական քննիչներ հրահանգ կամ դիտողութիւն չուղղեն տեսուչներուն, որովհետեւ այն ատեն մեր վարժարանները ազգային հոնգամանքէ ելլելով մասնաւոր վարժարաններ կը դառնան : Էմբուլան պէջ հաւանութիւն յայտնեց այս առաջարկին, պայմանաւ որ Պատրիարքարանները ստանձնեն պէտք եղած պատասխանատուութիւնը իշխանութեան առջեւ : Ս. Պատրիարքը ուսուցչական վկայականներու վաւերացման խնդիրն ալ յանձնեց նախարարին ուշադրութեան, որ խոստացաւ կարգադրութիւն մը ընել : Ն. Սրբազնութիւնը աւելցուց թէ կարգ մը տեղերու մէջ երբ ուսուցիչները զինուորագրութեան առնուին, անոնց կառավարած վարժարանները պիտի փակուին : Յետոյ յայտնեց թէ Կեդր. Վարժարանը ազգին կրթական բարձրագոյն հաստատութիւնը ըլլալով, իր աշակերտները պէտք է ազատ միտն զինուորագրութենէ, մինչեւ որ աւարտեն դպրոցական ընթացքը, ինչպէս կ'ըլլայ պետական բարձրագոյն վարժարանաց ուսանողներուն համար : Նախարարը արդարացի գտաւ այս առարկութիւնը, և հայ

աշակերտներու պետական վարժարանները ընդունուելու պարագային համար յայտարարեց թէ ու է ազգի պատկանող ուսանողի համար խնդիր չունի կառավարութիւնը, կը բաւէ որ մուտքի քննութիւնը տայ և պահանջուած պայմանները լրացնէ :

Ս. Պատրիարքը Դշ. օր իր տեսակցութեան արդիւնքը հաղորդեց Սառն Ժողովին, որ նկատողութեան առնելէ ետքը Ուսումնական Խորհրդոյ կողմէ ալ մատուցուած ընդարձակ տեղեկագիր մը, որոշեց, խնդրոյն կարեւորութեան և ստիպողութեան առջեւ, Ուր. օր (երէկ) բացառաբար Սառն Ժողով գումարել :

* *

ԽՍՈՆ ԺՈՂՈՎՈՅ Դշ. ի նիստին մէջ կարգադրեցաւ Էջմիածնի վեհարանի գիււանապետ Տ. Բազարատ վարդապետի հետագիրը, որով եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստացած տաան վարդապետներու անունները կը հաղորդէր : Ժողովը արձանագրեց. — Սօֆիայի Թաղ. Խորհուրդը հրահանգ կ'ուղէր նոյն քաղաքի Ս. Աստուածածին եկեղեցւոյն տեղական կառավարութեան կողմէ գնման առթիւ, և այդ մասին տեղեկութիւններ կուտար, Ժողովը լսեց նաեւ այդ խնդրոյն մասին անցեալ շաբթու Պուլկար զեպանատան Ա. Թարգմանին ըրած յայտարարութիւնները և Ս. Պատրիարք հօր հետ ըրած բանակցութիւնը, որով ապահովուած էր աւելի հոյակապ և կեղեցիկ մը և դպրոցի մը կառուցումը, որոշեց հարկ եղած հրահանգը տալ նոյն Թաղ. Խորհուրդին. — Հանգ. Թաշճեան Սարգիս Լ. Փ. ժառանգորդք գրով մը դիմում ըրած էին իրենց ծախիւք և սեփական զեանին վրայ կառուցանելի վարժարանի նկատմամբ. Ժողովը Տ. Վահան ք. Խոյեանի յանձնարարեց փութացնել տալ այս մասին Գնալի Թաղ. Խորհուրդէն սպասուած պատասխանը. — Ռոստոդոյի Գաւառ. Ժողովը վիճակին առաջնորդ ընտրած ըլլալով Տ. Գէորգ Ծ. Վ. Ասլանեանը, Ժողովը որոշեց հեռագրել նոյն վարդապետին, որպէս զի փութայ գալ Պոլիս : — Մայրաքաղաքիս Ս. Եկեղեցեաց քա-

հանայ Հայրերը հանրագրով դիտողութիւն ըրած էին նշանախօսութեան և պատկերամի գանձումը Պատրիարքարանի կողմէ տեղի չունենալուն մասին, ինչ որ յանձնարարուած էր Կրօն. Ժողովոյ նախորդ որոշմամբ: Ժողովը Կրօնականին յանձնեց նոյն հանրագիրը, փութացնելու համար սակացոյցի մը պատրաստութիւնն:

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ, ԴՆ. Նիստին մէջ, յառաջիկայի Եկեղեց. Համագումարին գործառնութեանց վրայ երկար խորհրդակցութիւն մը ընելով, որոշեց ժողովական Տ. Գնէլ Մ. Վ. Գալէմբարեանի յանձնել Գաւստ. Առաջնորդարաններէն հետզհետէ հասած եկեղեցական բարեկարգութեան ծրագիրները, ինչպէս նաեւ այս մասին եկեղեցական ու աշխարհական անհատներէ հասած առաջարկները ուսումնասիրելով լիակատար տեղեկագիր մը բերել Համագումարին:— Ժողովը Ազգ. Ընդհ. Ժողովոյ պաշտօնագրին վրայ որոշեց Եկեղեց. Ընդհ. Ժողով հրաւիրել պակասած երկու եկեղեցական երեսփոխաններու տեղ նորեր ընտրելու համար:— Ժողովը որոշեց Ղաւթիոյ, Պէշիկիմաչի և Ֆէրիգիւղի Դպրաց Դասերէն դպիրացուներու համար դպրութեան չորս աստիճան տալ:— Ժողովը նկատելով որ Եկեղեցական տեսակէտով ամուսնական և ամուսնալուծական օրէնքներ խմբագրելու գործը շատ լուրջ աշխատութիւն մըն է. որոշեց այս նպատակով կազմուած Յանձնաժողովի վեց անդամոց վրայ հետեւեալ երեք անդամներն ևս աւելցնել.— Տ. Գարրէլ Եպիսկ. Ճէվահիրճեան, Տ. Դեւոնդ Մ. Վ. Դուրեան և Տ. Զարմայր քհնյ. Կէզիւրեան, և փոխանորդարանի յանձնեց բոլոր անդամոց հրաւեր ուղղելը:— Ժողովը ամբողջ քահանաներու հաւանութեամբ պատրաստուած սակացոյցը հաստատեց և որոշեց դիւանին ստորագրութեամբ Սառն Ժողովոյ նկատառման յանձնել:

ԿԵԴՐ. ՎԱՐԺԱՐԱՆԻ կրօնագիրութեան դասը, Տ. Գնէլ Մ. Վ. ի հրաժարման վրայ, գոհութեամբ կ'իմանանք թէ յանձնուած է Տաճարի աշխատակից Տ. Սուրէն Վ. Գալէմբարեանի: Երիտասարդ արմաշականը,

իր տարիքի համապատասխան եռանդ, և անոր բոլորովին խոտորնակ չըջահայեաց լըջութիւն մը կը միացնէ իր անձին վրայ, ուսումնասիրող միտքի մը միացած: Կեդրոնականի խնամակալութիւնը շնորհաւորելի է ըրած ընտրութեանը համար:

ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

«ԱՍՏՈՒԾՈՅ ՏՈՒՆԸ»

Դրեց՝ ԽԱՉԱՏՈՒՐ ԳՌՈՒԶԱՆ

Սաչատուր էֆ. Գուրգեան, ազատութենէն ետքը պոլսահայ լրագրութեան և մանաւորապէս Բիզանդիոնի մէջ յայտնուած ողջամիտ գրող մը, որ իր սրտագրաւ, հոգեցունց և միանգամայն չըջահայեաց գրութիւններով քիչ ժամանակուան մէջ կրցաւ սիրուած անուն մը դառնալ, այս անգամ հրատարակած է ուշագրաւ գրքոյկ մը, ԱՍՏՈՒԾՈՅ ՏՈՒՆԸ, Եկեղեցիները հրապարակային գումարումներու առջեւ բանալու թէ գոցելու խնդրոյն առթիւ գրուած, ուր մանրամասն կերպով կ'ուսումնասիրուի հարցը, շատ ողջադատ տեսութիւններ պարզուելով այդ հրատապ խնդրոյն վրայ: Հեղինակը գրութիւնը բաժնած է վեց գլուխներու.— Ա. Հայուն սեւ ճակատագիրը, Բ. Եկեղեցոյ թշնամիները, Գ. Եկեղեցոյ նուիրակները, Դ. Ապագայ վստահները, Ե. Եկեղեցոյ ազատութեան պայմանները, Զ. Հայ ազգն ու յեղափոխական կառավարութիւնները: Ասիկա կը ցուցնէ թէ ո՛րքան լայնօրէն կը քննուի խնդիրը ներկայ հատորիկին մէջ, որ կը վաճառուի 100 փարայի դիւրամատչելի գինով:


ԱՐՏՈՆԱՏԻՐ

ՀԱՐԱՅԵԱԿ ԲԱՆՆ. ԷՐՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՀԱՐԱՄԱՅՐ ԲԱՆՆ. ԿԵԶԻՐԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ



ԲԱԶՄԱՎԵՊ

Անսագիր ազգային, քանասիրական
գրական եւ գիտական, պատկերազարդ
Վենետիկեան Հայերու հրատարակած
այս Հանդիսարանը ամէն ամիս կը բերէ
մեզի Հայ մատենագրութեան եւ Հայ այժ-
մէութեան նուիրուած հմուտ յօդուածներ
եւ տեսութիւններ: Տարեկան բաժնեգին 10
ֆր. կամ 50 ղրշ.: Հասցէ.—Rédaction
de la Revue «Bazmavep», St. Lazar,
Venise (Italie).

Հրատարակուեցաւ Սեպտեմբերի թիւը:

**Յ. Գ. ՄՐԱՐԸՐԵԱՆԻ ՎԵՐՁԻՆ
ԳՈՐԾԵՐԷՆ**

Աշխուիս, տաճնեակ իմաստասիրական,
7 ղրշ.:

Հին Օրեր եւ Պուէտ Խաչատուր Մի-
սաքեան, գին 7ու կէս ղրշ.:

Ստեղծ հին դէմքերու, տաճնեակ.
գին 5 ղրշ.:

Թրքահայ հին վաճառականութիւն եւ
վաճառականի, գին 10 ղրշ.:

19րդ դար, Յովն. Պրուսացի Տերոյեց,
գին 12ու կէս ղրշ.:

Պատմութիւն Հայ Գրականութեան՝ սկիզ-
բէն մինչեւ 6րդ դար (Յ. Բ.)՝ ի պէտս
բանասիրաց եւ բարձր. ուսանողաց. գին
6 ղրշ.:

Յ. Գ. Մրմըրեանի այս գործերը՝ կը
ծախուին Պոլսի բոլոր գրավաճառներուն
քով, մեծաքանակ (100ի չափ) ԿԱՆԽԻԿ
գնողներու կ'ըլլայ մեծկակ զեղչ. գրել հե-
ղինակին հասցէին, Կ. Պոլս Զաքմաքճը-
լար, Գըլըճեան գրատուն, կամ Մեծ Նոր
խան, վերնայարկ թիւ 53 սենեակը, Բշ.,
Եշ. եւ Շք. օրերը ժամը 3—9 (Ը., Թ.):

ՀՄԱՅՆԱԿ ՔԱՀԱՆԱՅ ԷԲՍԷՐՃԵԱՆ
ՏԱՐԵՐՔ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ

Ա. Բ. Գ. հատոր

30 զեղչ

Կեդրոնատեղի՝ Սիւմպիւլիւ խան Փափազ-
եան գրատուն:

ՏԳԹ. Ն. ՏԱՂԱՍԻԱՐԵԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

ՈՒՐՈՒԱԳԻԾ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ,
Ի սկզբանէ մինչ ցԱրշակունի Հարսուրեան:
Բ. Տպագր. Վենետիկ: Գին 5 ղրշ.:

ՀԱՅՈՑ ՀԻՆ ԿՐԾՆԵՐԸ, Բ. Տպագր.
Կ. Պոլս.—Գին 6 ղրշ.:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱԶՄԱՍՍՈՒԹԻՒՆ ԵՒ
ԲՆԱՍՍՈՒԹԻՒՆ.—Ազգ. վարժարանեան
համար պատրաստուած դասագիրք մը: 128
էջ, 55 կազմախօսական ընտիր պատկերներ:
Գին 5 ղրշ.:

ԿԱՐԵԻՈՐ

Բաժանորդներէն անոնց որ դեռ չեն
ղրկած իրենց բաժնեգինը, վերադին կը
յանձնարարենք փութացնել իրենց հաշիւին
կարգադրութիւնը. հակառակ պարագային
քերթիւն առաջարկը չի կրնար շարունակուիլ:
Նոյնը առաւել եւս կը յանձնարարենք
Պատ. գործակալներուն: Տարին լինելու
վրայ է: Դրամի առաքման լաւագոյն մի-
ջոցն է մանսա-քօսը, ամէնէն պզտիկ գու-
մարէն սկսեալ մինչեւ մեծագոյն գումար-
ները: Թղթատարական փուլ զրկողները
պէտք է 40 ղրշ. փուլ զրկեն (ե ոչ թէ
38 ղրշ. փ.), եւ առաւելագոյն երկու փառա-
նոց, որովհետեւ 20 կամ 40 փր. հոց փու-
լի այնքան պէտք չունինք, եւ այստեղի
նամակատուները չեն փոխեր: Փոխանա-
կագրով կամ Պոլս այս կամ այն տեղէն
գանձելու յանձնարարութիւնք դժուարու-
թեանց կամ յապաղումներու տեղի կուտան:

ՍԱՐՍՈՒՌՆԵՐ

Երիտասարդ Արմաշական Տ. Արտաւազդ
Ծ. Վ. Գալէնտէրեան, իր այս հրատարա-
կութեամբ կը յայտնուի իրրեւ երաժշտա-
գէտ: Սարսուղներ՝ անմահ բանաստեղծ
Դուրեանի Սեւ Հողերի քերթուածներն են
եղանակաւորուած Տ. Արտաւազդ Վ. է եւ
դաշնակորուած Բրօֆ. Արշակ Թ. Տաղլը-
եանէ: Կը բաղկանայ հետեւեալ քերթուած-
ներէն. Կոյր զինուորը (ողբերգ.), Վրէժ
(ռազմերգ եռաձայն), Լալոնք (ողբերգ.) եւ
Ստուերները Հայաստանին (ողբերգ քառա-
ձայն). մաքուր վիմագրութեամբ հրատա-
րակուած կը ծախուի գին 8 ղրշ. փ. եւ ար-
ժանի է ամէն երաժշտասէրի դաշնակին վը-
րայ գտնուելու:

